

**ՂԱԶԱԽՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**



**IOM International Organization for Migration**  
**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**  
**Հայաստանյան առաքելություն**

# ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն գրքույկը նախատեսված է Ղազախստանի Հանրապետություն մեկնողների համար: Գրքույկը պարունակում է տեղեկատվություն Ղազախստանի մուտքի, վիզային ռեժիմի, կացության, ՂՀ քաղաքացիության, Ղազախստանի աշխատանքային օրենսդրության վերաբերյալ, ինչպես նաև՝ ՂՀ-ում սեփական գործ սկսելու պայմանների մասին: Ներկայացված են նաև միգրանտներին իրավական աջակցություն և նրանց շահերի պաշտպանությունն իրականացնող հիմնական կազմակերպությունների տվյալները:



IOM International Organization for Migration  
Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)  
Հայաստանյան առաքելություն



Սույն ուղեցույցը հրատարակվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ֆինանսավորմամբ:

Պատրաստեց՝ **ՄՄԿ-ի Ղազախստանի առաքելությունը**

Տպագրության պատրաստեց՝ **ՄՄԿ Հայաստանյան առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժինը:**

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակների և հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

\*\*\*\*\*

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

\*\*\*\*\*

**Հրատարակիչ՝** Միգրացիայի Միջազգային կազմակերպություն



**IOM International Organization for Migration  
OIM Organization Internationale pour les Migrations  
OIM Organización Internacional para las Migraciones**

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)  
Հայաստանյան առաքելություն**

Հայաստան • Երևան 0010 • ՄՄԿ-ի գրասենյակ • Պետրոս Արամյան փողոց 14, 1-ին հարկ  
**Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33  
65 • Էլ.փոստ՝ [iom@iom.am](mailto:iom@iom.am) • <http://www.iom.int/armenia>**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Ի՞նչ է ԱՆՅՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ, ԵԹԵ ԺԱՄԱՆԵԼ ԵՔ ՂԱԶԱԽՍՏԱՆ 5**

**Օտարերկրյա քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները Ղազախստանի Հանրապետությունում 5**

**ՄՈՒՏՔ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 5**

**ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ 6**

**ՄՈՒՏՔ ՂԱԶԱԽՍՏԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՎ 7**

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՐՏ 8**

**ԳՐԱՆՑՈՒՄԸ 9**

**ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ 11**

**ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ 11**

**ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ 12**

**ՄԱՔՍԱՏՈՒՆ 12**

**ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ 13**

**Ի՞նչ ԱՆԵԼ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ 13**

**ԱՇԽԱՏԱՆՔ 14**

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

**ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ 14**

**ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 15**

**ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ**

**ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ (ԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ) 16**

**ԴՅ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ 18**

**ԴՅ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 18**

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ 19**

**ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 19**

**ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 19**

**ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑ**

**ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ՝ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 20**



# ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բնակչությունը՝ 15,211,000

ՀՆԱ՝ USD 7,440

Դրամական փոխանցումներ՝ USD 2.5 billion

Միգրացիոն գործակից՝ 8 միգրանտ/1,000 բնակիչ

Իմմիգրանտներ՝ 16.9%

Կանանց տոկոսը իմմիգրանտների մեջ՝ 57.8%

15-ից ցածր տարիքի բնակչություն՝ 24.2%

Միավ վարակակիրներ՝ 0.1%

## Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ, ԵԹԵ ԺԱՄԱՆԵԼ ԵՔ ՂԱԶԱԽՍՏԱՆ

### Օտարերկրյա քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները Ղազախստանի Հանրապետությունում

Սույն գրքույկը կազմողները նպատակ են ունեցել Ղազախստան ժամանող օտարերկրացիներին<sup>1</sup> առավել լիակատար տեղեկություններ մատուցել նրանց հիմնական պարտականությունների և իրավունքների մասին, ինչպես նաև տեղեկություններ անհրաժեշտության դեպքում անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության մասին:

## ՍՈՒՏՔ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օտարերկրացիներն իրավունք ունեն պետական սահմանի անցակետերով մուտք գործելու Ղազախստան վավերական արտասահմանյան անձնագրերով կամ փոխարինող փաստաթղթերով: Ղազախստանի Հանրապետության տարածք մուտք գործելու համար անհրաժեշտ է Ղազախստանի Հանրապետության վիզա, եթե ՂՀ միջազգային պայմանագրով այլ կարգ սահմանված չէ<sup>2</sup>:

Անձնագիրը պետք է տրված լինի օտարերկրացու քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու մարմնի կողմից և պետք է վավերական լինի, այսինքն՝ նորմալ վիճակում (առանց պատռված էջերի, ջնջումների և այլն): Վիզան, եթե այն պահանջվում է, պետք է սոսնձված լինի անձնագրին կամ անձը հաստատող և ուղևորության համար վավերական այլ փաստաթղթի, որը ՂՀ համար ընդունելի է: Վիզան օտարերկրացուն ՂՀ մուտք գործելու և այնտեղ մնալու, ինչպես նաև դրանում նշված ժամկետում երկրից մեկնելու կամ տարանցիկ երթուղով Ղես տարածքներով տեղաշարժվելու իրավունք է տալիս: Վիզայի ուժի մեջ լինելու վերջնաժամկետը պետք է անձնագրի ուժի մեջ լինելու վերջնաժամկետից **առնվազն 6 ամիս առաջ** լինի:

Ռուսաստանի քաղաքացիները կարող են Ղազախստան ժամանել ներքին անձնագրերով և 14 տարին չբոլորած երեխաների ծննդյան վկայականներով:

Ղրղզստանի քաղաքացիները կարող են Ղազախստան ժամանել Ղրղզստանի Հանրապետության քաղաքացու 1994 թ. նմուշի (արտասահմանի էջը լրացված լինելու պարագայում), 2004 թ. նմուշի անձնագրով, Ղրղզստանի Հանրապետության

<sup>1</sup> «Օտարերկրացի» եզրույթը սույն գրքույկում նշանակում է նաև քաղաքացիություն չունեցող անձ:

<sup>2</sup> Մուտքի արտոնագրերի մասին լիակատար տեղեկատվության համար խորհուրդ ենք տալիս կապվել ձեր երկրում Ղազախստանի Հանրապետության դեսպանության կամ հյուպատոսության հետ կամ այցելել ՂՀ արտգործնախարարության կայք (www.mfa.kz):

քաղաքացու 2004 թ. նմուշի վկայականով (պլաստիկ քարտ), ինչպես նաև 16 տարին չբոլորած երեխաների ծննդյան վկայականներով:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Որոշ պետությունների քաղաքացիներ կարող են Ղազախստան ժամանել առանց վիզայի: Նման պետությունների շարքն են դասվում, մասնավորապես, ԱՊՀ երկրները, բացառությամբ Թուրքմենստանի և Մերձբալթիկայի երկրների: Ուկրաինայի քաղաքացիները կարող են առանց վիզայի Ղազախստան ժամանել 90 օրից ոչ ավելի ժամկետով: Թուրքիայի քաղաքացիները կարող են առանց վիզայի Ղազախստան ժամանել 1 (մեկ) ամիս ժամկետով:

Ղազախստանի Հանրապետության տարածք օտարերկրացուց վիզա չի պահանջվում, եթե նա ունի հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը.

- ՂԽ-ում մշտապես բնակվող օտարերկրացի քաղաքացու կացության փաստաթուղթ՝ վավերական ազգային անձնագրի առկայության պարագայում,
- քաղաքացիություն չունեցող անձի վկայական՝ ՂՀ-ում մշտական բնակության վայրի գրանցումով:

Վիզայի առկայությունը չի նշանակում, որ օտարերկրացին մեքենայորեն Ղազախստանի տարածք մուտք գործելու իրավունք է ստանում: Ըստ Ղազախստանի Հանրապետության օրենսդրության՝ իրավասու մարմինները կարող են մերժել օտարերկրացու Ղազախստանի Հանրապետություն մուտքի թույլտվությունը:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Առանց համապատասխան փաստաթղթերի կամ անվավեր փաստաթղթերով Ղազախստան մուտք գործելու համար օտարերկրացուն կարող են պատասխանատվության ենթարկել՝ համաձայն Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի կամ Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի:

(Տե՛ս ՂՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասը, Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածը:)

## **ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ**

Օտարերկրացին կարող է Ղախստան ժամանել ինչպես իրավաբանական (կազմակերպությունների), այնպես էլ ֆիզիկական անձանց հրավերով, զբոսաշրջության նպատակով, անձնական գործերով, գործնական նպատակով կամ աշխատանքի տեղավորվելու նպատակով (եթե օտարերկրացուն հրավիրող գործատուն Ղազախստանում օտարերկրյա աշխատուժ ներգրավելու թույլտվություն ունի, իսկ օտարերկրացին՝ աշխատանքի վիզա):

Կազմակերպությունը, որը օտարերկրացուն հրավիրում է այցելել Ղազախստան որպես զբոսաշրջիկ կամ գործնական նպատակով, պետք է կամ նամակ-հրավեր ուղարկի նրան, կամ դրա պատճենը: Նամակ-հրավերը պետք է համաձայնեցվի միգրացիոն ոստիկանության տեղի ստորաբաժանման հետ, այնուհետև՝ ՂՀ ԱԳՆ հյուպատոսական ծառայության բաժանմունքի հետ, որի աշխատակիցները հրավերի վրա վիզային հաստատման համար են դնում:

Ֆիզիկական անձը, որ օտարերկրացուն հրավիրում է Ղազախստան անձնական գործերով, պետք է անձնական հրավեր ուղարկի նրան՝ համաձայնեցված միգրացիոն ոստիկանության տեղի ստորաբաժանման հետ:

Ղազախստան կողմից հրավերը ստանալուց հետո օտարերկրացին վիզան ստանալու համար պետք է դիմի քաղաքացիության կամ բնակության երկրում Ղազախստանի Հանրապետության դեսպանություն/հյուպատոսություն և ներկայացնի

փաստաթղթերը (անձնագիրը, հրավերը, լրացված հարցաթերթիկը և լուսանկարը): Վիզան ստանալու դիմաց օտարերկրացին նաև պետք է վճարի հյուպատոսական տուրքը:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Վիզաները դասակարգվում են հետևյալ տեսակների. **դիվանագիտական, ծառայողական, ներդրողական, գործնական, անձնական, զբոսաշրջության, ուսման, աշխատանքի, բուժման, մշտական բնակության, տարանցիկ:**

Վիզաները լինում են նաև **բազմակի**, որոնք հնարավորություն են տալիս վիզայի համար հատկացված ժամկետի ընթացքում երկիր ժամանել անսահմանափակ թվով, և **միանվագ, կրկնակի, եռակի**, որոնք հնարավորություն են տալիս երկիր ժամանել համապատասխան թվով:

Ավստրալիայի, Ավստրիայի, Անդորրայի, Արգենտինայի, Բելգիայի, Բուլղարիայի, Բրազիլիայի, Վատիկանի, Մեծ Բրիտանիայի, Հունգարիայի, Հունաստանի, Դանիայի, Իսրայելի, Իռլանդիայի, Իսլանդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Կանադայի, Կիպրոսի, Կորեայի Հանրապետության, Կոստա-Ռիկայի, Կուբայի, Լատվիայի, Լիտվայի, Լիխտենշտեյնի, Լյուքսեմբուրգի, Մալայզիայի, Մալթայի, Մեքսիկայի, Մոնակոյի, Նաուրուի, Նիդեռլանդների, Նոր Զելանդիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սան Մարինոյի, Սինգապուրի, Սլովակիայի, Սլովենիայի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ուրուգվայի, Չեխիայի, Չիլիի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Խորվաթիայի, Էստոնիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Գամայկայի, Գալոնիայի քաղաքացիներին գործնական կամ զբոսաշրջության նպատակներով հրավիրելու համար միգրացիոն ոստիկանության տեղի ստորաբաժանման հետ համաձայնություն չի պահանջվում: Ընդունող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հրավերներն անմիջականորեն ներկայացվում են ԴՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայության բաժանմունք:

Ծառայողական, զբոսաշրջության, անձնական և գործնական նպատակներով Ղազախստանի Հանրապետություն վերոնշյալ երկրների քաղաքացիների մուտքի **միանվագ** վիզա ստանալու համար հրավեր չի պահանջվում:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Ղազախստանի Հանրապետություն օտարերկրացու ժամանման նպատակը պետք է խստագույնս համապատասխանի տրված վիզայի տեսակին: Անձնական, գործնական, զբոսաշրջության վիզաները, ինչպես և ուսման վիզան, օտարերկրացուն Ղազախստանի Հանրապետությունում **աշխատելու իրավունք չեն տալիս:**

Եթե օտարերկրացու Ղազախստանի Հանրապետություն ժամանելու նպատակը չի համապատասխանում նրան տրված վիզայի տեսակին, օրինակ՝ օտարերկրացին, Ղազախստան ժամանելով զբոսաշրջության վիզայով, սկսել է աշխատել երկրում, ապա նա կարող է Ղազախստանի դատարանով պատասխանատվության ենթարկվել՝ տուգանքի կամ մինչև 15-օրյա վարչական ձերբակալության և այնուհետև ԴՀ-ից արտաքսման:

(Տե՛ս ԴՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասը:)

### **ՍՈՒՏՔ ՂԱԶԱԽՍՏԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՎ**

ԴՀ սահմանը ավտոտրանսպորտով հատելիս օտարերկրացին պետք է իմանա, որ որոշ սահմանապահ անցակետեր բաց են ցանկացած երկրի քաղաքացիների անցնելու համար (**բազմակողմ**), իսկ որոշ անցակետեր՝ միայն Ղազախստանի և սահմանակից պետությունների քաղաքացիների համար (**երկկողմ**):



## **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Բազմակողմ անցակետերն են՝

- Չինաստանի ժողովրդական Յանրապետության հետ սահմանում. Խորզոս, Դոստիկ, Կոլժատ, Բախտի, Մայկապչազայ.
- Ռուսաստանի Դաշնության հետ սահմանում. Տասկալա, Սիրիմ, Ակսայ, Ալիմբետ, Ժայսան, Կայրակ, Ակբալչիկ, Ժանա ժոլ, Կարակոզա, Ուրլի-տորբե, Սուլու Ազաշ, Կոսակ, Շարբակտի, Աուիլ, Ուբե, Ժեզբենտ.
- Դրոզդաստանի Յանրապետության հետ սահմանում. Աշա Բիբի, Սապիտայ Բատիր, Կորդայ, Կեզեն, Կարասու.
- Ուզբեկստանի Յանրապետության հետ սահմանում. Տաժեն, Ժիբեկ ժոլի, Բ. Կոնիսբանա, Շարդարա, Կապլանբեկ, Սիրդարյա, Ցելիննի,
- Թուրքմենստանի հետ սահմանում. Թեմիրբաբա:

Երկկողմ անցակետերն են՝

- Չինաստանի ժողովրդական Յանրապետության հետ սահմանում. Ալեքսենկա, Նարինկոլ.
- Ռուսաստանի Դաշնության հետ սահմանում. Ժիլանդի, Օրդա, Ժանիբեկ, Կազտալովկա, Շազան, Ժիրենկոպա, Կարաշատաու, Այտեկե Բի, Կոնդիբայ, Ակկարգա, Ժելկուար, Այաթ, Ուբազան, Կոկտերեկ, Այիմժան, Կիզիլ ժառ, Բիդաիկ, Ուլկեն-Կարաոյ, Ամանքելդի, Երտիս, Նայզա, Բայտանատ, Կոյանբայ, Կոկսու.
- Դրոզդաստանի Յանրապետության հետ սահմանում. Ալաթաու, Աուհատտի, Ակսու, Բեսազաշ, Ժայիլ, Սարտորբե.
- Ուզբեկստանի Յանրապետության հետ սահմանում. Մինթայ, Կազիգուրտ, Կեսկեն, Թուլե-բի, Կարաբայ, Ատամեկեն, Բիրլիկ, Մայակ:

(Տե՛ս ԴՅ սահմանի ավտոտրանսպորտային միջոցների անցակետերի և ԴՅ տարածքում ավտոտրանսպորտի հսկողության պահակակետերի ցուցակը՝ հաստատված ԴՅ կառավարության 27.02.04 թ. № 238 որոշմամբ):

## **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե օտարերկրացին ցանկանում է Ղազախստան ժամանել հարևան երկրից, բայց թե՛ այդ երկրի, թե՛ Ղազախստանի քաղաքացի **2Է**, ապա պետք է անցնի բազմակողմ անցակետով: Եթե օտարերկրացին փորձի մտնել երկկողմ անցակետով, ապա նրա մուտքը կարգելվի:

## **ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՐՏ**

Ղազախստան ժամանող 16 տարեկանից մեծ բոլոր օտարերկրացիները պետք է լրացնեն միգրացիոն քարտը: Այդ քարտը տրվում է **անվճար** մինչև սահմանապահ կամ մաքսային ստուգումը: Օտարերկրացին այն պետք է լրացնի ընթեռնելի, առանց ջնջումների և թանաքով կամ գնդիկավոր գրիչով ուղղումների: Միգրացիոն քարտը կարելի է լրացնել կիրիլյան կամ լատինական տառերով՝ անձնագրում կամ անձը հաստատող այլ փաստաթղթում նշված տվյալներին համապատասխան: Սահմանապահ կամ մաքսային ստուգման կետն անցնելիս անհրաժեշտ է սահմանապահին կամ մաքսային ծառայության աշխատակցին ցույց տալ միգրացիոն քարտը, որոնք դրա վրա նշում են սահմանն անցնելու տարին ու ամսաթիվը:

## **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե անցակետն անցնելիս պարզվում է, որ միգրացիոն քարտ չկա, ապա այն կարելի է ստանալ միգրացիոն ոստիկանության՝ ԴՅ-ում օտարերկրացու գտնվելու վայրի ստորաբաժնումից: Այդ դեպքում սահմանը հատելու տարվա ու ամսաթվի

դրոշմակնիքը սահմանապահը կամ մաքսային ծառայության աշխատակիցը պետք է դնի օտարերկրացու անձնագրում:

Միգրացիոն քարտը **ԿԱՐՈՂ ԵՆ ՉԼՐԱՑՆԵԼ**.

- դիվանագիտական, ծառայողական և ներդրողի վիզա ունեցող օտարերկրացիները,
- օդանավերի, ծովի և գետի նավերի անձնակազմերի անդամները,
- գնացքների բրիգադների աշխատողները, այդ թվում ռեֆրիժերատորային, լոկոմոտիվային, և երկաթուղային տրանսպորտով փոխադրվող բեռներն ուղեկցող անձինք,
- Ղազախստանի Հանրապետության տարածքով անցնող տարանցիկ գնացքների ուղևորները,
- միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների վարորդները:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Միգրացիոն քարտը Ղազախստանում գտնվելու ամբողջ ընթացքում պետք է լինի օտարերկրացու մոտ և իրավապահ մամիների աշխատակիցների պահանջի դեպքում ներկայացվի անձնագրի հետ միասին: Այն անհրաժեշտ է նաև միգրացիոն ոստիկանությունում գրանցվելու համար:

Միգրացիոն քարտը կորցնելու դեպքում օտարերկրացին պետք է 3 օրվա ընթացքում հայտնի այդ մասին միգրացիոն ոստիկանության՝ գտնվելու վայրի ստորաբաժնի մանր, որտեղ նրան համապատասխան ստուգումից հետո կհանձնեն միգրացիոն քարտի կրկնօրինակը:

Ղազախստանից մեկնելիս օտարերկրացին պետք է միգրացիոն քարտը վերադարձնի սահմանապահ կամ մաքսային ծառայության աշխատակիցներին: Միգրացիոն քարտի բացակայության դեպքում հետագա պարզաբանումների համար օտարերկրացուն ուղարկում են ներքին գործերի մարմիններ (միգրացիոն ոստիկանություն):

(Տես ՂՀ կառավարության 28.01.2000 թ. №136 «Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների գտնվելու իրավական կարգավորման առանձին հարցեր» որոշման 11-1 կետը, ինչպես նաև Միգրացիոն քարտեր հանձնելու կանոնները:)

### **ԳՐԱՆՑՈՒՄԸ**

ՂՀ-ում օրինական կարգով գտնվելու համար օտարերկրացին Ղազախստան ժամանելու պահից հինգ օրացուցային օրվա ընթացքում պետք է իր անձնագիրը գրանցի ներքին գործերի (միգրացիոն ոստիկանության) բնակության վայրի մարմիններում:

(Տես Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ժամանելու և գտնվելու, ինչպես նաև ՂՀ-ից մեկնելու կանոնների 3-րդ կետը՝ հաստատված ՂՀ կառավարության 28.01.2000 թ. №136 «Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների գտնվելու իրավական կարգավորման առանձին հարցեր» որոշմամբ:)

Ավստրալիայի, Ավստրիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Դանիայի, Իռլանդիայի, Իսլանդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Կանադայի, Լիխտենշտեյնի, Լյուքսեմբուրգի, Մալայզիայի, Մոնակոյի, Նիդեռլանդների, Նոր Զելանդիայի, Նորվեգիայի, Պորտուգալիայի, Սինգապուրի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, ճապոնիայի և Կորեայի Հանրապետության քաղաքացիները անձնագրի գրանցումը կարող են ստանալ արտասահմանում ՂՀ դեսպանատներում/հյուպատոսություններում վիզան ձևակերպելիս կամ Ղազախստանի 12 միջազգային օդանավակայաններում անձնագրային-սահմանապահ ստուգում անցնելիս: Արտասահմանում ՂՀ դեսպանատնում/հյուպատոսությունում

անձնագրի գրանցումն անցնելուց կամ ՂՅ 12 միջազգային օդանավակայաններում անձնագրային-սահմանապահ ստուգում անցնելուց հետո օտարերկրացին ԿՎՐՈՂ Է ՉԴԻՄԵԼ միգրացիոն ոստիկանության ստորաբաժանումներ, որպեսզի գրանցի իր գտնվելը ՂՅ տարածքում:

Եթե ինչ-ինչ պատճառներով օտարերկրացին չի գրանցվել ՂՅ հյուպատոսական հաստատությունում կամ սահմանը հատելիս (Ղազախստանի 12 միջազգային օդանավակայաններում անձնագրային-սահմանապահ ստուգում անցնելիս), ապա կարող է գրանցումն իրականացնել Ղազախստանի տարածքում՝ միգրացիոն ոստիկանության ստորաբաժանումներում: Դրա համար բավական է միգրացիոն ոստիկանության աշխատակցին նեկայացնել վավերական անձնագիրը, միգրացիոն քարտը՝ սահմանը հատելու մասին նշումով, և ընդունող կողմի (իրավաբանական կամ ֆիզիկական անձի) միջնորդությունը: Եթե օտարերկրացին ժամանել է զբոսաշրջության վիզայով, ապա նա կարող է ներկայացնել դիմում իր անունից:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե օտարերկրացին Ղազախստան է ժամանել 5 (հինգ) օրից պակաս ժամկետով, գրանցում չի պահանջվում:

Ղրղզստանի քաղաքացիները իրավունք ունեն 90 օրվա ընթացքում առանց գրանցման գտնվելու Ղազախստանի տարածքում:

Գրանցումը ձևակերպվում է օտարերկրացու ազգային անձնագրի և վիզայի վավերականության ժամկետը չանցնող ժամանակաշրջանում: Եթե օտարերկրացին ժամանել է առանց վիզայի (ՂՅ սահմանով տեղաշարժվելու ոչ վիզային կարգով), ապա գրանցումը կատարվում է 90 օրից ոչ ավելի ժամկետով:

Օտարերկրացիների անձնագրերի գրանցումն իրականացվում է անվճար Ղազախստանի բոլոր քաղաքներում, բացառությամբ Ալմաթի քաղաքի:

Այն քաղաքացիների գրանցումը, ովքեր օրենքով սահմանված կարգով արտասահմանյան աշխատուժի ներգրավման (աշխատանքի) ձևակերպված թույլտվություն ունեն, ձևակերպվում է տվյալ թույլտվության ուժի մեջ լինելու ժամկետով:

ՂՅ-ի ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացիների գրանցումը ձևակերպվում է մեկ ուսումնական տարով:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե օտարերկրացին Ղազախստանի Հանրապետությունում փոխում է իր ժամանակավոր բնակության վայրը, ապա ընդունող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է գրավոր տեղեկացնել այդ մասին ներքին գործերի մարմիններին: Ինքը՝ օտարերկրացին **ՉՊԵՏՔ Է** կրկնակի գրանցում անցնի: Բայց եթե օտարերկրացին ինքնուրույն է ժամանել (առանց հրավերի), ապա խորհուրդ ենք տալիս նրան բնակության վայրի փոփոխության մասին տեղեկացնել միգրացիոն ոստիկանության մարմիններին:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ժամանման և գտնվելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետությունից նրանց մեկնելու կանոնների կիրառման և ներքին գործերի մարմինների՝ Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխման և արգելման օպերատիվ-ծառայողական գործունեության կազմակերպման հրահանգի 3-րդ գլուխը:)

Եթե օտարերկրացին հավակնում է օրալմանի<sup>3</sup> կամ փախստականի<sup>4</sup> կարգավիճակի, ապա պետք է դիմի ՂՅ աշխատանքի և սոցիալական պաշտպանության

<sup>3</sup> օրալման - օտարերկրացի կամ ղազախ ազգության քաղաքացիություն չունեցող անձ. որը ՂՅ ինքն-իշխանություն ձեռք բերելու պահին մշտապես բնակվել է նրա սահմաններից դուրս և Ղազախստան է ժամանել մշտական բնակության նպատակով (Ղազախստանի Հանրապետության 1997 թ. դեկտեմբերի 13-ի N204-1 «Բնակչության միգրացիայի մասին» օրենքի հոդված 1):

Նախարարության Միգրացիայի կոմիտեի համապատասխան տարածքային վարչություն օրլամանի կամ փախստականի կարգավիճակ շնորհելու միջնորդությամբ: Եթե անգամ օտարերկրացին Ղազախստանի տարածքում դիմել է օրլամանի կամ փախստականի կարգավիճակի համար, ապա նա, ինչպես և որևէ այլ օտարերկրյա քաղաքացի, պետք է ՂՅ տարածք մուտք գործելու պահից 5 օրվա ընթացքում իր անձնագիրը գրանցի միգրացիոն ոստիկանության վարչությունում:

## **ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ ԳՏԼՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ**

Այն դեպքում, երբ օտարերկրացուն պետք է ինչ-որ հարգելի պատճառով մնալ ՂՅ-ում լրացուցիչ ժամկետով, ապա անհրաժեշտ է, որ նա երկարացնի ոչ միայն վիզան (եթե ժամանել է վիզայով), այլև իր անձնագրի գրանցումը:

## **ՎԻԶԱՅԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ**

Վիզայի երկարացման դիմումը միգրացիոն ոստիկանության՝ օտարերկրացու գրանցված ստորաբաժանումանը հանձնում է նրան Ղազախստան հրավիրած կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը կամ էլ ինքը՝ օտարերկրացին: Դիմումին պետք է կցվեն օտարերկրացու Ղազախստանում գտնվելու երկարացման անհրաժեշտությունը հաստատող փաստաթղթեր (հավաստագիր, պայմանագրեր և այլն): Վիզայի ուժի մեջ լինելու ժամկետի երկարացման մասին որոշումն ընդունվում է գրավոր դիմում տալու կամ օտարերկրացուն ընդունող կազմակերպության (ֆիզիկական անձի) դիմում տալու պահից սկսած հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե վիզայի երկարացման դիմումի կապակցությամբ ընդունվում է դրական որոշում, ապա օտարերկրացին ստանում է նույն կարգի նոր վիզա:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի՝ պետքարտուղարի 2002 թ. դեկտեմբերի 24-ի N08-1/77 հրամանով և Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2002 թ. դեկտեմբերի 27-ի N806 հրամանով հաստատված Ղազախստանի Հանրապետության վիզաների հանձնման կարգի մասին հրահանգի 66-րդ կետը:)

## **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Զբոսաշրջության վիզաները կարող են երկարացվել միայն բացառիկ դեպքերում, ինչպիսիք են զբոսաշրջիկի հիվանդությունը, բնական աղետները, արտակարգ իրավիճակները և այլն:

Արտասահմանյան դիվանագիտական և հյուպատոսական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և արտասահմանյան պետությունների՝ ՂՅ-ի արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված կամ գրանցված այլ ներկայացուցչությունների աշխատակիցների գտնվելու ժամկետի երկարացումն իրականացնում է ՂՅ ԱԳՆ-ն հավատարմագրի վավերականության ժամկետը չանցնող ժամանակով:

Վիզան երկարացնելու համար անհրաժեշտ է պետտուրք վճարել՝ 1 մվազագույն հաշվարկային ցուցանիշի չափով:

---

<sup>4</sup> Փախստական – օտարերկրացի, որը քաղաքական համոզմունքների պատճառով, ռասայի, դավանանքի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության հատկանիշով հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր մտավախության հետևանքով ստիպված է իր քաղաքացիության պատկանելության երկրից դուրս գտնվել և չի կարող օգտվել իր երկրի պաշտպանությունից կամ չի ցանկանում օգտվել պաշտպանությունից նման մտավախությունների պատճառով, կամ քաղաքացիություն չունեցող անձ, ով գտնվում է իր նախկին սովորական բնակության վայրի երկրից դուրս և չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այդ մտավախությունների պատճառով (*Ղազախստանի Հանրապետության 1997 թ. դեկտեմբերի 13-ի N204-1 «Բնակչության միգրացիայի մասին» օրենքի հոդված 1*):

## **ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ**

Այն դեպքում, երբ օտարերկրացին Ղազախստան է ժամանում սահմանը հատելու ոչ վիզային կարգով և նախատեսում է հանրապետությունում մնալ լրացուցիչ ժամանակով, ապա պետք է երկարացնի անձնագրի գրանցումը: Գրանցման երկարացման համար օտարերկրացուն Ղազախստան հրավիրած կազմակերպությունը, ֆիզիկական անձը կամ ինքը՝ օտարերկրացին պետք է գրանցման ուժի մեջ լինելու ժամկետի երկարացման մասին դիմում ներկայացնեն միգրացիոն ոստիկանության՝ գտնվելու (գրանցման) վայրի ստորաբաժանում:

Գրանցման երկարացման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

- գրանցման վավերականության ժամկետի երկարացման անհրաժեշտությունը հաստատող (պայմանագիր, տեղեկանք բժշկական հաստատությունից և այլն),
- վավերական անձնագիր:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե օտարերկրացին Ղազախստան է ժամանել անձնական գործերով, ապա նրա գրանցումը կարող են երկարացնել լրացուցիչ 90 օրով:

Եթե օտարերկրացին Ղազախստան է ժամանել ուսման համար, ապա նրա գրանցումը երկարացվում է ամբողջ ուսումնական տարվա ժամանակով:

Եթե օտարերկրացին Ղազախստան է ժամանել գործնական նպատակով, ապա նրա գրանցումը կարող է երկարացվել ոչ ավելի, քան 1 (մեկ) տարով:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրացի քաղաքացիների ժամանման և գտնվելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետությունից նրանց մեկնելու կանոնների կիրառման և ներքին գործերի մարմինների՝ Ղազախստանի Հանրապետությունում արտասահմանյան քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխման և արգելման օպերատիվ-ծառայողական գործունեության կազմակերպման 14.04.04 թ. հրահանգը:)

### **ՄԱՔՍԱՏՈՒՆ**

Եթե օտարերկրացին իր հետ արժեքավոր իրեր է Ղազախստան է բերում կամ հանրապետությունից տանում, ապա անհրաժեշտ է իմանալ, որ կարող են պահանջել հայտարարագրել դրանք, հատկապես երկրից մեկնելիս: Մաքսատան կանոնների մասին տեղեկատվությունը սովորաբար առկա է օդանավակայաններում և պետական սահմանների անցակետերում: Այն կարելի է գտնել նաև ՂՀ ֆինանսների նախարարության Մաքսային հսկողության կոմիտեի կայքում՝ [www.customs.kz](http://www.customs.kz)

Եթե օտարերկրացին Ղազախստան արձեռն արժույթ է բերում (արտասահմանյան կամ ազգային) կամ հանրապետությունից տանում՝ 3000 ԱՄՆ դոլարի համարժեքը գերազանցող չափով, արժույթը պարտադիր ենթակա է Ղազախստանի մաքսային մարմնում գրավոր հայտարարագրման: Արժույթի փոխադրումը սահմանափակված չէ, սակայն հայտարարագիրը հիմք կծառայի, որպեսզի տարվող գումարը նախկինում օտարերկրացու Ղազախստան բերած գումարի սահմաններում լինի:

Եթե օտարերկրացին ԱՄՆ 10,000 դոլարի համարժեքից ավելի արտարժույթ է փոխադրում, ապա պետք է նաև հաստատի ԱՄՆ տասը հազար դոլար գումարը գերազանցող փողի օրինական ծագումը:

Վճարային փաստաթղթերի (մուրհակներ, կտրոններ, այդ թվում՝ ճանապարհային) Ղազախստանի Հանրապետություն բերելը և հանրապետությունից տանելը, որոնց անվանական արժեքը (նոմինալ) արտահայտված է ազգային և արտասահմանյան արժույթով, ենթակա չեն գրավոր հայտարարագրման և իրականացվում են առանց սահմանափակման:

(Տե՛ս ՂՀ 13.06.2005 թ. №57-3 օրենքը «Արժույթի կարգավորման և արժույթի հսկողության մասին»:)

## **ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ**

Ոստիկանության աշխատակիցները (պարեկային կարգախմբեր և միգրացիոն ոստիկանություն) իրավունք ունեն ստուգելու օտարերկրացու անձը հաստատող փաստաթղթերը (անձնագիրը): Եթե օտարերկրացին իր մոտ փաստաթղթեր (կամ դրանց պատճենները, որոնց թարգմանությունը հաստատված է նոտարի կողմից) չունի, ապա նրան կարող են տանել ոստիկանության շրջանային բաժանմունք՝ անձը հաստատելու համար: Օտարերկրացու անձը պարզելու նպատակով նրան կարող են այնտեղ պահել ոչ ավելի, քան 3 (երեք) ժամ: Եթե այդ ընթացքում օտարերկրացու հրավիրած կազմակերպության կամ անձի օգնությամբ չի հաջողվում հաստատել նրա անձը, ապա նրան կարող են մինչև անձը հաստատելը՝ 30 (երեսուն) օրից ոչ ավելի ժամկետով, տեղավորել ընդունիչ-բաշխիչ կետում:

Ոստիկանության աշխատակիցները իրավունք ունեն նաև անսահմանափակ թվով այցելելու օտարերկրացու բնակության վայրը (բնակարանը, տունը, հանրակացարանը, հյուրանատոցը և այլն)՝ անձը հաստատող փաստաթղթերը ստուգելու նպատակով:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետության 1995 թ. դեկտեմբերի 21-ի N 2707 «Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի մարմինների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը, Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ժամանման և գտնվելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետությունից նրանց մեկնելու կանոնների կիրառման և ներքին գործերի մարմինների՝ Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխման և արգելման օպերատիվ-ծառայողական գործունեության կազմակերպման հրահանգի 3-6-րդ կետերը:)

## **Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

Եթե օտարերկրացին կորցնում է իր անձնագիրը կամ այն զողանում են, նա պետք է միգրացիոն ոստիկանության այն բաժանմունք, որտեղ գրանցվել է ըստ բնակության վայրի, անմիջապես դիմի մանրամասն դիմումով այն մասին, թե որտեղ և ինչ հանգամանքներում է կորցրել փաստաթուղթը: Օտարերկրացու դիմումի հիման վրա, եթե նրա գրանցված է եղել և անձը հաստատվել է, միգրացիոն ոստիկանության աշխատակիցները նրան տեղեկանք կտան, որում կնշվեն նրա տվյալները՝ ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, կորցրած ազգային անձնագրի համարը և այլն: Հետագայում օտարերկրացին պետք է տվյալ տեղեկանքով դիմի իր պետության դեսպանատուն կամ հյուպատոսարան, որտեղ նրան տեղեկանքի հիման վրա անձնագիր կամ դրան փոխարինող փաստաթուղթ կտան:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ժամանման և գտնվելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետությունից նրանց մեկնելու կանոնների կիրառման և ներքին գործերի մարմինների՝ Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխման և արգելման օպերատիվ-ծառայողական գործունեության կազմակերպման 14.04.04 թ. հրահանգի 97-րդ կետը:)

Օտարերկրացին բոլոր հետաքրքրող հարցերով կարող է դիմել իր քաղաքացիության երկրի դեսպանատուն կամ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) գրասենյակ:

## **ԱՆԽԱՏԱՆՔ**

Ղազախստանի աշխատանքային օրենսդրությունը պաշտպանում է երկրի ներքին աշխատաշուկան: Ուստի առավելապես երկիր են հրավիրում հազվագյուտ մասնագիտության բարձր որակավորման մասնագետների, որոնց դժվար է գտնել Ղազախստանում:

Օտարերկրացին կարող է օրինական աշխատել Ղազախստանում միայն այն գործատուի մոտ, ով օտարերկրացու՝ որպես արտասահմանցի աշխատողի ներգրավելու թույլտվություն ունի՝ տրված ակիմատի (Ակիմատին առընթեր զբաղվածության և սոցիալական ծրագրերի վարչություն) կողմից:

Եթե գուծատուն օտարերկրացու՝ որպես արտասահմանցի աշխատողի ներգրավելու թույլտվություն չունի, ապա օտարերկրացու աշխատանքը Ղազախստանում կհամարվի անօրինական:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Անօրինական աշխատանքի համար Ղազախստանում իրավապահ մարմինների աշխատակիցները կամ դատարանը իրավունք ունեն պատասխանատվության ենթարկելու օտարերկրացուն տուգանքի ձևով կամ 15-օրյա ժամկետով վարչական ձերբակալությամբ՝ այնուհետև վտարելով երկրից: Տուգանք նշանակելու մասին որոշումը կայացնում են իրավապահ մարմինների աշխատակիցները, իսկ վարչական ձերբակալության և հետագա վտարման մասին որոշումը՝ դատարանը: Ընդ որում՝ դատարանի՝ ձերբակալության և հետագա վտարման մասին որոշումից հետո օտարերկրացուն արգելվում է դատարանի որոշումը հրապարակելու պահից հինգ տարվա ընթացքում ժամանել Ղազախստան:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Ղազախստանում օտարերկրացու օրինական աշխատանքի տեղավորվելու դեպքում գործատուն պարտավոր է նրա հետ աշխատանքային պայմանագիր կնքել:

Ղազախստանում օրինական աշխատանքի տեղավորված օտարերկրացին պարտավոր է աշխատանքն սկսելու պահից երեսուն օրվա ընթացքում որպես հարկատու պետական գրանցում անցել իր գտնվելու վայրի հարկային մարմնում և վկայական ստանալ իրեն հարկատուի գրանցման համար (ՉԳՅ) շնորհելու մասին:

## **ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ**

Ղազախստանի Սահմանադրությունը երաշխավորում է օտարերկրացիների ձեռնարկատիրական գործունեության ազատությունը: Օրինական ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար օտարերկրացին պետք է որպես անհատ ձեռներեց պարտադիր գրանցում անցնի գտնվելու վայրի հարկային մարմնում և համապատասխան տեղեկանք ստանա: Անհատ ձեռներեցի տեղեկանք ստանալուց հետո օտարերկրացին պետք է գրանցվի որպես հարկատու և ՉԳՅ ստանա:

Սակայն, եթե օտարերկրացին ձեռնարկատիրական գործունեություն է ծավալում՝ վարձելով երրորդ անձանց (աշխատողների), օրենսդրությունը պարտավորեցնում է նրան գրանցվել որպես իրավաբանական անձ:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Եթե օտարերկրացին տարեկան վարձում է ոչ ավելի, քան 50 աշխատողի, ապա օրենսդրությունը նրան դասում է փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների կարգը: Եթե օտարերկրացին տարեկան վարձում է 50-ից ավելի աշխատողների, ապա օրենսդրությունը նրան դասում է միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կարգը:

Եթե օտարերկրացին Ղազախստան է եկել առևտուր անելու համար, օրինակ՝ սննդամթերք կամ լայն սպառման ապրանքներ, ապա պետք է պայմանագիր կնքի առևտրի կետ վարձելու մասին և վաճակալություն տվողից պահանջի վարձակալած առևտրի կետի վարձի վճարումը հաստատող փաստաթղթեր: Առևտրի տեղի

վարձակալության վճարումը հաստատող փաստաթղթերը անհրաժեշտ է պահպանել:

Եթե օտարերկրացին վերանորոգման կամ մասնավոր բնակարանի շինարարության ծառայություններ է մատուցում, ապա պետք է պատվիրատուի հետ պայմանագիր կնքի վերանորոգման (շինարարական) աշխատանքների կատարման մասին:

Ալմաթի քաղաքում անհատական ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար օտարերկրացին **ՉՊԵՏՔ Է** Ալմաթի քաղաքի ակիմի աշխատակազմի էկոնոմիկայի կոմիտեի թույլտվություն ստանա:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Օտարերկրացու՝ որպես փոքր կամ միջին ձեռնարկատիրության սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության ծավալումը, առանց իրավաբանական կրթության, համարվում է Ղազախստանի գործող օրենսդրության խախտում և պատասխանատվության ենթարկվելու հետևանքներ է առաջացնում:

### **ԱՁԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

ՂՅ-ում գտնվող օտարերկրացիները կարող են ազատորեն տեղաշարժվել Ղազախստանի Հանրապետության՝ օտարերկրյա քաղաքացիների այցելության համար բաց տարածքում: Նրանք նաև իրավունք ունեն ընտրելու իրենց բնակության վայրը Ղազախստանի Հանրապետության՝ օտարերկրյա քաղաքացիների այցելության համար բաց տարածքում:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

Մինչև 2006 թ. օտարերկրյա քաղաքացիների այցելության համար փակ էին հետևյալ տարածքները.

- Գվարդեյսկի քաղաքատիպ ավանը, տարածքի սահմանագիծը՝ Ռոսսավել ավան, գտնվում է Ալմաթիի և Ժամբիլի մարզերի հատման կետում.
- Կուլժաբասի երկաթուղային կիսակայարանը, որ Օթար (Ժամբիլի մարզ) կայարանից 10 կմ հեռավորության վրա է.
- Արևմտյան Ղազախստանի մարզի Բոկեյորդինի և Ժանգալինի շրջանները.
- Պրիօզյորսկ քաղաքը, Կարազանդայի մարզի Գուլշադ ավանը.
- Բայկոնիր քաղաքը.
- Կիզիլորդինի մարզի Կարմակշինի և Կազալինի շրջանները.
- Ղազախստանի Հանրապետության՝ ռազմավարական նշանակություն ունեցող բոլոր օբյեկտները, ռեժիմային օբյեկտները.
- Սահմանապահ գոտին:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Սույն գրքույկը կազմողները խորհուրդ են տալիս ՂՅ տարածքում գտնվող բոլոր օտարերկրացիներին, ովքեր ցանկանում են այցելել կամ տեղափոխվել մի այլ վայր հանրապետության տարածքում, նախ ճշտել՝ արդյոք տվյալ տարածքը փափկ է օտարերկրյա աղաքացիների այցելության համար: Նման տեղեկությունը կարելի է ճշտել քաղաքացիության երկրի դեսպանատանը կամ հյուպատոսարանում կամ էլ ՂՅ արտաքին գործերի նախարարությունում (հյուպատոսական ծառայության բաժանմունք) և կամ ՂՅ արտաքին գործերի նախարարությունում:



## **ՂԱԶԱԽՍԱՏՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ (ԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ)**

Ղազախստանի օրենսդրությունը երկրում գտնվող օտարերկրացիներին դասակարգում է երկու տեսակի. հանրապետությունում ժամանակավոր գտնվողներ և մշտական բնակվողներ:

Ղազախստանում մշտական բնակվող օտարերկրացի են ճանաչվում այն օտարերկրացիները, ովքեր հանրապետությունում մշտական բնակվելու թույլտվություն և կացության իրավունք են ստացել:

Ղազախստանում ժամանակավոր գտնվող օտարերկրացի են ճանաչվում այն օտարերկրացիները, ովքեր Ղազախստանում մշտական բնակության թույլտվություն չունեն, ինչպես նաև կացության իրավունք: Սակայն ՂՀ-ում ժամանակավոր գտնվող յուրաքանչյուր օտարերկրացի իրավունք ունի հանրապետությունում մշտական բնակության թույլտվություն ստանալու հարցով դիմելու Ղազախստանի իրավասու մարմիններ: ՂՀ-ում մշտական բնակության թույլտվությունը՝ հաստատված կացության վկայականով, օտարերկրացուն տալիս է այն նույն իրավունքները, ինչ ունեն Ղազախստանի քաղաքացիները, բացառությամբ ընտրելու և ընտրվելու իրավունքի, ինչպես նաև պետական ծառայողի աշխատանքի իրավունքի:

Օտարերկրացուն ՂՀ-ում մշտական բնակության թույլտվության և ապա բնակության վկայականի հանձնման հարցը որոշվում է միգրացիոն ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում:

Թույլտվությունը ստանալու համար օտարերկրացին պետք է դիմի միգրացիոն ոստիկանության իր ժամանակավոր գրանցման ստորաբաժանում հետևյալ փաստաթղթերով.

- հաստատված ձևի հարցաթերթիկ-դիմում, որը կարելի է ստանալ միգրացիոն ոստիկանությունում,
- ազգային անձնագիր և դրա նոտարական հաստատումով պատճենը,
- ամուսնության վկայական և դրա պատճենը (եթե օտարերկրացին ամուսնացած է Ղազախստանի քաղաքացու/քաղաքացուհու հետ),
- երեխաների ծննդյան վկայականներ և դրանց պատճենները (Ղազախստանի քաղաքացու/քաղաքացուհու հետ ամուսնությունից երեխաների առկայության դեպքում),
- Ղազախստանի Հանրապետությունում մշտական բնակության մնալու մասին անձնական միջնորդություն, որը կազմվում է ազատ ձևով և տրվում է միգրացիոն ոստիկանության այն ստորաբաժանման պետի անունով, որին դիմում է օտարերկրացին թույլտվություն ստանալու համար,
- մանրամասն ինքնակենսագրություն, որը կազմվում է ազատ ձևով,
- չորս լուսանկար՝ 3,5 x 4,5 սմ չափսի,
- օտարերկրացու քաղաքացիության պետության գրավոր համաձայնություն. որպես այդպիսին կարող է ծառայել ՂՀ-ում մշտական բնակության համար ժամանելու նշումը անձնագրում, ինչպես նաև դեսպանության մասնակը և հեռանալու թերթիկը,
- օտարերկրացու քաղաքացիության պետության իրավասու մարմինների կողմից տրված տեղեկանք չդատվածության, ինչպես նաև չկատարված պարտականությունների բացակայության մասին, օրինակ՝ երրորդ անձանց (նախկին ամուսնու/կնոջ, երեխաների) ալիմենտի,
- 086 ձևի բժշկական տեղեկանք,
- ՂՀ քաղաքացու համաձայնություն այն բնակարանի հասցեով օտարերկրացուն առնվազն 5 տարի ժանկետով գրանցելու մասին, որտեղ գտնվում

է օտարերկրացին և որի սեփականատերը տվյալ քաղաքացին է. համաձայնությանը կցվում են բնակարանի սեփականատիրոջ անձը հաստատող և բնակարանի սեփականության իրավունքի փաստաթղթերը,

- տեղեկանք ՂՅ բանկից օտարերկրացու վճարունակության մասին:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆՍԼ**

Ղազախստանի Հանրապետությունում մշտական բնակության թույլտվության պարտադիր պայման է նման թույլտվություն ստանալու հավակնության հաստատումը օտարերկրացու կողմից: Իր վճարունակությունը հաստատելու համար օտարերկրացին պարտավոր է միգրացիոն ոստիկանություն ներկայացնել տեղեկանք Ղազախստանի բանկից՝ ստորագրված բանկի լիազոր անձի կողմից և բանկում օտարերկրացու հաշվեհամարի առկայության մասին տեղեկատվությամբ, ինչպես նաև՝ հաշվեհամարում գումարի առկայության, որը պետք է առնվազն հավասար լինի 1320 նվազագույն հաշվարկային ցուցանիշի:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆՍԼ**

Ղազախստանի Հանրապետությունում մշտական բնակության մնալու հարցը որոշելիս վճարունակության հաստատում **ԶԻ ՊԱՅԱՆՋՎՈՒՄ**

1. օրալմաններից,
2. Ղազախստանի Հանրապետությունում կամ Ղազախստանի ՀԱՅ-ում ծնված անձանցից՝ ծննդյան պահին առկա վարչատարածքային բաժանման համաձայն, անկախ այն հանգամանքից՝ ծննդյան պահին եղե՞լ են նրանք Ղազախստանի Հանրապետության և Ղազախստանի ՀԱՅ-ի քաղաքացի, թե՞ ոչ,
3. նախկինում Ղազախստանի Հանրապետության կամ Ղազախստանի ՀԱՅ-ի քաղաքացի եղած անձանցից՝ անկախ այդ քաղաքացիության դադարեցման ձևակերպումից կամ այլ հիմքերով քաղաքացիությունը կորցնելուց,
4. օրալմանների և Ղազախստանի Հանրապետությունում ծնված կամ Ղազախստանի Հանրապետության կամ Ղազախստանի ՀԱՅ-ի քաղաքացի եղած անձանց ընտանիքների անդամներից, որոնց թվում են երեխաները (այդ թվում՝ նաև որդեգրած), ամուսինը (կինը), ծնողները (որդեգրողները), հարազատ քույրերը, եղբայրները, պապերը, տատերը, թոռները՝ անկախ այն հանգամանքից՝ նրանց հետ միասի՞ն են ժամանել, թե՞ առանձին:

Օտարերկրացու՝ ՂՅ-ում մշտական բնակության մնալու փաստաթղթերի քննության ժամկետը չպետք է գերազանցի երկու ամիսը՝ սկսած դրանք հանձնելու պահից:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ժամանման և գտնվելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետությունից նրանց մեկնելու կանոնների կիրառման և ներքին գործերի մարմինների՝ Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխման և արգելման օպերատիվ-ծառայողական գործունեության կազմակերպման հրահանգի 66-րդ կետը:)

Վերը նշված ժամկետը սպառվելուց հետո միգրացիոն ոստիկանության աշխատակիցները պարտավոր են օտարերկրացուն պաշտոնական պատասխան տալ՝ որը պետք է բովանդակի ՂՅ-ում մշտական բնակության մնալու հարցի կապակցությամբ ընդունված որոշումը: Պատասխանը կարող է և՛ դրական լինել, և՛ ՂՅ-ում մշտական բնակության թույլտվության մերժում:

Եթե օտարերկրացու նկատմամբ դրական որոշում է ընդունվում ՂՅ-ում մշտական բնակության մնալու մասին, ձևակերպվում են օտարերկրացու կացության իրավունքի փաստաթղթերը:

ՂՅ-ում մշտական բնակության թույլտվության մերժումը պետք է հասկանալի լինի՝ մերժման հստակ պատճառի նշումով և մերժման տվյալ պատճառը նախատեսող օրենսդրական ակտերի հղումներով:

## **ՂԶ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ**

Օտարերկրացին կարող է դիմել ՂՅ քաղաքացիություն ստանալու համար հետևյալ պայմանների առկայության պարագայում.

1. եթե օտարերկրացին մշտապես (կացության իրավունքով) ապրել է Ղազախստանում առնվազն հինգ տարի,
2. եթե օտարերկրացին ամուսնացած է եղել Ղազախստանի քաղաքացու/քաղաքացուհու հետ առնվազն երեք տարի,
3. եթե օտարերկրացին ԽՍՀՄ նախկին հանրապետություններից որևէ մեկի քաղաքացի է, ժամանել է Ղազախստան նրա տարածքում մշտական բնակության նպատակով և նրա մերձավոր հարազատներից մեկը Ղազախստանի քաղաքացի է. երեխան (այդ թվում և որդեգրած), քույրը, եղբայրը, պապը կամ տատը՝ անկախ Ղազախստանի Հանրապետությունում բնակության ժամկետից:

ՂՅ քաղաքացիություն ստանալու նպատակով օտարերկրացին պետք է դիմի միգրացիոն ոստիկանության իր գրանցման վայրի ստորաբաժնում ՂՅ քաղաքացիություն ընդունելու մասին դիմումով, որը տրվում է Ղազախստանի Հանրապետության նախագահի անունով:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Ղազախստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու փաստաթղթերը ձևակերպելու համար օտարերկրացին պետք է պետական տուրք վճարի՝ 1 նվազագույն հաշվարկային ցուցանիշի չափով:

### **ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ**

ՂՅ քաղաքացիություն ստանալու ընդհանուր կանոնը Ղազախստանի քաղաքացիություն հայցող օտարերկրացուց նախկին երկրի քաղաքացիությունից հրաժարվելու պահանջն է: Սակայն օրենսդրությունը նախատեսում է մի շարք բացառություններ այս կանոնից, որոնց սույն գրքույկը կազմողները խորհուրդ են տալիս մանրամասն ծանոթանալ միգրացիոն ոստիկանությունում:

ՂՅ քաղաքացիություն ստանալու մասին դիմումի քննության ժամկետը չպետք է վեց ամսից ավելի լինի՝ սկսած դիմումը հանձնելու պահից:

## **ՂԴ-ՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Եթե օտարերկրացին օրինական է գտնվում Ղազախստանի տարածքում, ապա իր գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները պաշտպանելու համար դատարան և պետական այլ մարմիններ դիմելու իրավունք ունի: Դատարանում օտարերկրացին, ՂՅ քաղաքացու հավասար, օգտվում է դատավարական իրավունքներից: Եթե օտարերկրացին որևէ պատասխանատվության է ենթարկվում, իրավունք ունի օգտվելու թարգմանչի և փաստաբանի ծառայություններից: Թարգմանչի ծառայությունների համար վճարում է պետությունը:

(Տե՛ս Ղազախստանի Հանրապետության նախագահի 1995 թ. հունիսի 19-ի N 2337 «Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական դրության մասին» հրամանը, որը օրենքի ուժ ունի:)

## **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՅԱՄԱՐ**

ՂՅ-ում գտնվելու կանոնները խախտելու համար, որ դրսևորվում է գրանցման, տեղաշարժվելու (արգելված տարածքներ մուտք գործելու), բնակության վայրի ընտրության ընդունված կարգը կամ ՂՅ տարածքով տարանցիկ փոխադրման կանոնները չպահպանելով, կամ գտնվելու որոշակի ժամկետը սպառվելուց հետո (վիզայի կամ գրանցման ժամկետն ավարտվելը) մեկնելուց հրաժարվելով, օտարերկրացուն կարող են վարչական պատասխանատվության ենթարկել հետևյալ ձևերով. նախազգուշացում, տուգանք, 15-օրյա ժամկետով ձերբակալություն՝ այնուհետև ՂՅ սահմաններից վարչական վտարումով:

### **ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ**

Նախազգուշացումը և վարչական տուգանքը նշանակում են միգրացիոն ոստիկանության բաժինների պետերը և նրանց տեղակալները, ձերբակալությունը՝ վարչական վտարումով՝ միայն դատարանը:  
(Տե՛ս ՂՅ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը):

### **ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ**

**Խորհուրդ ենք տալիս օտարերկրացիներին՝**

- դիմել քաղաքացիության/բնակության երկրում Ղազախստանի դեսպանություն/հյուպատոսություն՝ ճշտելու համար՝ անհրաժեշտ է վիզա ունենալ Ղազախստանի Հանրապետություն մուտք գործելու համար,
- անձնագրերը միշտ իրենց մոտ պահել, կամ զոմե դրանց նոտարական հաստատումով թարգմանված պատճենները, ինչպես նաև միգրացիոն քարտը և գրանցումը (եթե պահանջվում է),
- մինչև տվյալ տարածքով անցնելը ճշտել՝ արդյոք փակ չէ՞ այն օտարկրյա քաղաքացիների այցելության համար,
- Ղազախստան հրավիրող կազմակերպությունից կամ մասնավոր անձից մանրամասն տեղեկություններ խնդրել Ղազախստանում գործող մաքսա-յին կանոնների մասին,
- միգրացիոն ոստիկանությունում ճշտել ՂՅ-ում մշտական բնակության մնալու հարցի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը,
- ՂՅ-ում մշտական բնակության թույլտվության մերժումը բողոքարկել դատարանում (ՂՅ-ում մշտական բնակության մնալու հարցի քննության կապակցությամբ մերժում ստանալու դեպքում),
- միգրացիոն ոստիկանությունում ճշտել ՂՅ քաղաքացիություն ընդունելու
- հարցի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը:

### **ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

- 2008 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ նվազագույն հաշվարկային ցուցանիշը կազմել է 1168 թե՛նգե:
- Ղազախստանում անօրինական աշխատանքի համար տուգանքի չափը կազմում է 40-ից (քառասունից) մինչև 50 (հիսուն) նվազագույն հաշվարկային ցուցանիշ (46 720 թե՛նգեից մինչև 58 400 թե՛նգե):
- Որպես անհատ ձեռներեց գրանցվելու համար գանձվում է 4 նվազագույն հաշվարկային ցուցանիշ (4672 թե՛նգե):

# **ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐՆ ՈՒ ՀԵՈԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ՝ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ**

## **1. Ղազախստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն**

Սեյֆուլլին փողոց 579, Ալմաթի 480075

Հեռ.՝ (7 3272) 917296

Ֆաքս՝ (7 3272) 917296

Էլ-փոստ՝ [akod100@hotmail.com](mailto:akod100@hotmail.com)

## **2. Միգրացիայի միջազգային կազմակերպության Ղազախստանի առաքելություն**

Սարյարկա փողոց 6, 6-րդ հարկ, Աստանա 010000

Հեռ.՝ +7.717 29 90 52 1

+7.717 29 90 52 2

Ֆաքս՝ +7.717 29 90 52 4

## **3. Ղազախստանի Կարմիր մահիկի ընկերություն**

Հասցե՝ Կունաս փողոց, 86, 050010 Ալմաթի

Հեռախոս՝ (7) 727 2916291

Ֆաքս՝ (7) 727 2918172

Էլ-փոստ՝ [info@redcrescent.kz](mailto:info@redcrescent.kz)

Կայք՝ <http://www.redcrescent.kz>

Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչական ոստիկանության Միգրացիոն ոստիկանության կոմիտեի վարչություն, ք. Աստանա, Հաղթանակի պող. 65 Ա, (7172) 71-56-05

ՂՀ ՆԳՎ Միգրացիոն ոստիկանության վարչություն, ք. Ալմաթի, Կարասայ բառիի փող. 109 Ա, (7272) 54-41-34, 54-41-40, 54-41-42, 54-46-84

ՂՀ ՆԳՎ Միգրացիոն ոստիկանության վարչություն, ք. Աստանա, Սեյֆուլլինի փող. 29, (7172) 71-60-82

ՂՀ ԱԳՆ Հյուպատոսական ծառայության բաժանմունք, ք. Աստանա, Նեզավիսիմայա փող. 35, (7172) 72-01-64, ֆաքս (3172) 72-04-60

ՂՀ ԱԳՆ ներկայացուցչություն ք. Ալմաթիում, (7272) 72-07-31, 72-01-29, 72-01-61

Մարդու իրավունքների պաշտպան Ղազախստանի Հանրապետությունում, (7172) 15-29-67, ֆաքս՝ (7172) 32-17-67

Ալմաթի քաղաքի հարկային կոմիտե, Ալիբայ խանի պող. 93/95, (7272) 67-15-54, 72-84-10

Աստանա քաղաքի հարկային կոմիտե, Պուլզկինի փող. 164/2, (7172) 77-31-93

Ալմաթի քաղաքի արդարադատության բաժանմունք, Բայգակովի փող. 287 Ա, (7272) 77-55-45

Աստանա քաղաքի արդարադատության բաժանմունք, Հաղթանակի պող. 15, (7172) 32-28-84

Ալմաթի քաղաքի ակիմատի զբաղվածության և սոցիալական ծրագրերի վարչություն, Կունասի փող. 122, (7272) 61-67-49, 261-67-97

Եթե իրավաբանական օգնության կամ խորհրդատվության կարիք ունեք, կարող եք այն ստանալ անվճար Ղազախստանի մարդու իրավունքների և օրինականության պահպանման միջազգային գրասենյակի մասնաճյուղերից.

Ղազախստանի մարդու իրավունքների և օրինականության պահպանման միջազգային գրասենյակ, ք. Ալմաթի (7272) 601368, 601366, ք. Աստանա (7172) 225504, ք. Ակտաու (7292) 522841, ք. Կարագանդա (7172) 423507, ք. Օսկեմեն (7232) 248831, ք. Պավլոդար (7182) 554563, ք. Ուրալսկ (7112) 508929, ք. Շիմքենտ (7252) 539693, ք. Կոստանայ (7142) 533640

